«ՄԱՅԼԵՌ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՄԱՅԼԵՌ ՄԱՈՒՆԹԱՅՆ ՌԵԶՈՐԹ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԽԱՂԱՏԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՄԱՅԼԵՌ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՄԱՅԼԵՌ ՄԱՈՒՆԹԱՅՆ ՌԵԶՈՐԹ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԽԱՂԱՏԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Սույն օրենքը կարգավորում է «Մայլեռ» ներդրումային ծրագրի շրջանակներում «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» փակ բաժնետիրական ընկերությանը խաղատան լիցենզիայի տրամադրման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Սույն օրենքի կիրառության իմաստով՝

1) «Մայլեռ» ներդրումային ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր) է համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած՝ առնվազն 15 միլիարդ ՀՀ դրամի ներդրմամբ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան խոշորացված համայնքի Եղիպատրուշ վարչական բնակավայրում ճոպանուղու և 2 հյուրանոցների կառուցումն ու շահագործումը.

2) Ծրագիր իրականացնող կազմակերպություն է համարվում «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

Հոդված 3. Ծրագրի իրականացման շրջանակներում՝

1. Ընկերությանը խաղատան գործունեության լիցենզիան տրամադրվում է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներին և սույն օրենքին համապատասխան:
2. Լիցենզիան տրամադրվում է Ծրագրի իրականացման համար նախատեսված տարածքում «խաղատան կազմակերպում» գործունեության նպատակով:

Հոդված 4. Ծրագրի շրջանակներում Ընկերությանը սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված լիցենզիայի տրամադրման նպատակով գանձվում է տարեկան պետական տուրք՝ բազային տուրքի 100000-ապատիկի չափով։ Պետական տուրքի գծով պարտավորությունների ծագման, պետական տուրքը գանձելու, վերադարձնելու, պետական տուրք վճարողների իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև պետական տուրքի հետ կապված մյուս հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով։

Հոդված 5. Ծրագրով նախատեսված ենթակառուցվածքների շահագործման հանձնման պահից Ընկերությունը կարող է դիմել Լիցենզավորող մարմին «խաղատների կազմակերպում» գործունեության լիցենզիա ստանալու նպատակով։

Հոդված 6. Ծրագիրը չկատարելու դեպքում Ընկերությանը սույն օրենքի շրջանակներում տրամադրված լիցենզիայի գործողությունը դադարեցվում է՝ Ծրագրի չկատարման դեպքում, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում։

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Հայաստանի Հանրապետության
Նախագահ